

Գիրքը յուսադատճեհահանվել է
A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from www.A-PDF.com to remove the watermark

"Նամահայկական էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից եւ ներկայացվում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

Library

ՄԱՅՑՈՒՄ ԿԱՐՆԱԿԱՆ ԵՄ ԶԵՐ ԼՈՐՄԻՆՈՒՄ ԸՆԴՈՒՄ ԸՅՅԱՅԱՍ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏ
ԼՈՒՄԻՆՈՍԿԵԼԱՆՈՒՄԵՆԻ ԳՐԵՐԸ:

ՔՐՈՑՆԻ ԳՐԵՐԻ ՄՏԵՐՈՒՄԱՆ ՄԱՆԸՄԱՐԱՆՆԵՐԸ ԿԱՐՆԱԿԱՆ
ԻՄՈՒՄԱՆ "ՇԱՄԱԸՅՔԱՎԱՐԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԵՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՑՔԻՑ

www.freebooks.am

ԵՆԴՐՈՒՄԱՆ ԵՎՆ ՈՐ ԺԳՆԱԼԻՄ ԵՄ ՄՏԵՐ ԿՈՑՔԻՑ
ՑԱՆԿՈՒՄ ԵՎՆ ՀԱՇՎԻ ԸՆԹԵՐՏՈՒՄՆԵՐԻՆ:



ԳՐԵՐ ԼՐԻՑ՝ freebooks@rambler.ru

Հայոց



ՏԱՌԱՆՍ

www.freebooks.do.am

www.freebooks.am



ՀԱՅՏՆՍՈՒԹՅՈՒՆ

Անձն սեսիլներ, գալիս եք սորից,
Հայտնվում, ինչպես օրերին անցյալ.
Կհպատակվե՞ք այլ անգամ դուք ինձ
Հասո՞ւ եմ նախկին ցնորքիս դարձյալ:
Ամբոսպո՞ւմ եք. Լա՞վ. միգամած հեռվից
Եկե՛ք ձեր թովքին ուզում եմ անսալ-
Թրթի՞նք սե՛ պզու՛մ ես պատանեկան
Ձեր երթի ավտո՞ղ շնչից մոզական

Ինքու՛մ սր ձեզ ուստ դեմքեր սիրելի
Պատկերն եք բերում օրերի խնդուն
Հարձում են ռճո՞ղ հին առասպելի
Ե վ առաջին սեր. Կ՛ մտերմությամ
* Ցախն է սորոգվում. կրկին պշտով լի
Բառսն եմ կյանքի ողբում ապարդյուն.
Ողբում լավերի՛ն որ բախտից խաբված
Ետի՛կ հասակում գնացին անպա՞ծ. *

Նրանք չեն լսում իմ երգերը նոր,
Ում ես ծոնեցի թոթովանքս վաղ,
Կապն ընկերական խզված է այսօր
Մարեց առաջին արծագանքն, ավա՛ղ.
Խորթ են ամբոխին երգերս բոլոր,
Ահ է ինձ ալղում ասգամ ծափն ուրախ,
Մինչդեռ ով սրտանց երգս կլսեր,
Պանդուխտ է թափառ, թե ապրում է դեռ

ու վաղնջական կարոտն է ծնվում
Այն ոգիների խոհուն, անձկալի,
Երգս է անմեկին մրմունջով թնում,
Թրթռում, ինչպես տավիղն Էոլի
Սարսռում են ես, արցունքս է հեղվում,
Կարծրացած հոգիս հեկուլթամբ է լի,
Լուծվում է, կորչում շուրջս ամեն բան
Ցնո՛րքն է սորից թվում իրական

ՆԱԽԱԲԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՍ

Գիրնկտոր, բանաստեղծ դերասան

Գ Ի Ր Ե Կ Տ Ո Ր

Դուք, որ ինձ եք օգնել այնքան,
Ինձ հետ կիսել հոյսեր շողում
Ասեք ի՞նչ է մեզ պատում
Նրկրներում գերմանական:
Կուզենայի հաճոյանալ եւ ամբոխին.
Ապրում է նա, թողնում, որ դու ինքդ էլ ապրես
Թեմահարթակն ահա ամուր գամված հողին,
Եվ անհամբեր մի բազմաթյան հանդիսատես,
Տեսնիք, սայում են ակնապիշ մարդիկ դարձյալ
Ցանկանալով գվարճանալ ու գտրմանալ:
Ինչպե՛ս լինել ժողովրդի սրտին մոտիկ —
Գիտեմ, բայց թե հուզումն է ինձ պատում էլի
Ճիշտ է գե՞տ լին բնականոցի լավին մարդիկ

Բայց թե արդեն շատ են կարդում սուրսափծլի՝
 Ինչպե՞ս անել, որ ամեն ինչ նրանց համար
 Նոր լինի, թարմ, դուրեկան ու իմաստալից՝
 Հաճո է շատ, երբ շորս կողմից ամբոխն համառ
 Մոտ է վազում, հեղեղի պես հորձանք տալիս,
 Երբ սպասման հաւաշանքով անթիվ մարդիկ
 Օր-ցերեկով, երբ թատրոնը տեսնում են փակ,
 Նեղ դունակով ներս են մղվում դեպի կրպակ,
 Այնպես, կարծիք դուրս են եկել սրամարտի՝
 Ինչպես հսցի խանութի մոտ սովի տարին,
 Խոնվում են տոմսի համար ամեն անգամ
 Այս հրաշքը հասու է լոկ պոետներին
 Նույնը արտ նաև այսօր, ի՛մ բարեկամ։

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ս

Օ՛, մի՛ խոսիր խառնամբոխից խայտանկար,՝
 Որի տեսքից երկնշում է ոգիս հիմա։
 Վարսագուրի՛ր իրարանցումն այս խելագար,
 Հորձանուտի խորքն է քաշում ինձ տկամա։
 Ո՛չ, տա՛ր դու ինձ մի երկնային խաղաղ հովիտ,
 Ուր պոետի խյինդն է ծաղկում սնապական,
 Ուր իսկական մտերմությունն ու սերն անվիշտ
 Հանճարում է, փայտիտյում ձևոր՝ արալչա՛լանս
 Ա՛խ, ինչ բխում է լնդերքից մեր սրտերի,
 Ինչ ամբխած թոթովում է հանկարծ մի շուրթ,
 Միւնույն է, լինի հաջող, լինի թերի,

Կլանում է ինչ-որ վայրկյան մի անհագուրդ:
Եվ կատարյալն այն է միայն արևի տակ,
Ինչ կտրում է երկար ուղին տարիների:
Ակնթարթի համար է լուկ փայլը դատարկ,
Գարեբի՞նն է, ինչ անեղծ է ու անթերի:

Գ Ե Ր Ա Ս Ա Ն

Գալոց մասին շսեի ես երանի:
Եթե ինքս էլ ապագայից խոսել ջանամ,
էլ ո՞վ պիտի մեր սերնդին ղվարթացնի
Ձէ՞ որ սրտանց ուզում է նա ղվարճանալ:
Ու՞մ հայտնի չէ՞ դահլիճն ինչպես կուրախանա,
Եոր գա հանդես կատակարան մի սրամիտ:
Ով ամբոխին հաճոյանալ կարողանա,
Ձի դառնանա մարդկանց սրտին մոտ է նա միշտ:
Նա կերպով լառալի մեծ ու լայն շրջան,
Որ առավել ցնցի մարդկանց, իրինդ պատճառի:
Դուք էլ այդպես կղեք խիզախ ու փութաջան,
Աղատություն տվեք մտքի ողջ կաճառին
Թող գան հանդես խելք, սեր, հույդեր, կրքեր անսանձ,
Բայց լավ կանեք՝ խենթություն էլ խառնեք դրանց:

Գ Ի Ր Ե Կ Տ Ո Ր

Եվ մանուկանդ սուր դիպվածներ հանեցեք բեմ
Նայելու են գալիս, թող որ նայեն արբած:
Թե շատ անցքեր տեսնի սմբոխն իր աչքի դեմ

Այնքան, որ նա սքանչանա բերանը բաց,
 Ուրեմն՝ արդեն հասել եք ձեր նպատակին
 Եվ ամբոխի համար արդեն մարդ եք անգին:
 Լոկ ամբոխով կղարմացնեք դուք ամբոխին.
 Քող ամեն մարդ փտնի այնտեղ ինչ որոնի
 Քե շատ ունեք, շատ ըան կտաք ձեզ լսողին,
 Գոհ կթողնի նա սրահը ձեր թատրոնի:
 Քատերգությունն ամբողջությամբ մի՛ ցուցադրեք.
 Եման ուզուն ձեզ կրերի հաջողություն:
 Բեմադրելը հեշտ կլինի, երբ հեշտ գրեք,
 Ի՞նչ կշահեք, երբ ամփոփ փորժ մեջտեղ բերեք,
 Միևնույն է, մաս-մաս կանի ամբոխն իսկույն:

Ր Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Մ

Չեք էլ դգում, թե ի՞նչ ստոր արհեստ է դա՛
 Սրվեստագետ մարդու համար անպատվաբեր:
 Գրչակների խղրղանքին, իբրև շղթա,
 Գամեղ են ձեզ օրենք դարձած ինչ որ կապեր:

Դ Ի Բ Ե Կ Տ Ո Ր

Այդ կշտամբանքն ամենևին ինձ չի խոցում.
 Ով ուզում է շսխալվել ըռնած գործում,
 Չէոքն է տոնում, ինչ խոսք, գործիքն ամենալավ:
 Պատկերացրեք, թե փափուկ փայտ պիտի կտրեք,
 Եվ խորհեցեք, թե ո՛ւմ համար պիտի գրեք:
 Ոմանք այստեղ ձանձրույթից են գալիս հարկավ,

Ոմանք՝ թողած խրախճանքի սեղանը լի,
 Իսկ ոմանք էլ (և դա այնքան է սոսկալի)
 Լրագրերից շորթած մտքեր տարածելու
 Նորություններ իմանալու տենչին հլու՝
 Խոնվում են դիմահանդես լինի ասես:
 Հաղար ձևով կանայք հանում են ասպարեղ
 Նաղանք ու գուգս, իրենց դերը խաղում անվարձ:
 Ի՞նչ եք արդյոք անըջում դուք բարձունքներում,
 Լեցուն թատրոնն ի՞նչ խինդ է ձեզ արդյոք բերում:
 Դուք մոտիկի՛ց տեսեք մարդկանց՝ ձեզնով տարված:
 Ստոնարչուն են նրանք մասամբ, մասամբ՝ կոպիտ.
 Կամ թատրոնից շտապում են թղթախաղի
 Կամ թե գիրկը պոռնկուհու՝ մուլուցքով բիրտ:
 Խենթ թշվառներ, ի՞նչ եք տանջում դուք սնտեղի
 Մուսաներին ձեր քնքշասիրտ:
 Ասում եմ ձեզ դրե՛ք, գրե՛ք շատ առավել
 Եվ չեք շեղվի նպատակից կյանքում երբեք,
Սշխատեցեք մարդկանց միայն մուլորեցնել,
~~Գոհացնելը գովար է շատ. լավ իմացեք:~~
 Զեղ ի՞նչ եղավ ներշնչվեցի՞ք, թե՞ ցավ ունեք:

Թ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ս

Թո՛ղ ինձ և ա՛յլ ստրուկի հետ փնտրիր ասլուստ:
 Սի՛թե պոետն իրավունքը իր մարդկային՝
 Իրավունքը իր վեհագույն՝ տրված վերուստ,
 Պիտի ծաղրի, պիտի եղծի ի սեր շահի

ԴԵ.

Ինչե՞վ է նա հուզում հոգիմ աղամորգու,
Ինչե՞վ է նա արդյոք հաղթում ամեն տարերք,
Ո՞չ դաշնությամբ, որ բխելով կրծքից հորդուն,
Ամփոփում է իր մեջ աշխարհն այս անեղերք:
Բնությունը ճախարակով երբ շարունակ
Մանում է իր հսկերժության թելն անտարբեր,
Երբ ժխտում է հեղհեղուկ ու տաղտկաբեր
Բազմութիւնը էակների աններդաշնակ,
Ո՞վ է արդյոք, որ գոյության պաղ թափորին
Տալիս է շափ և հարաս և կենտանութիւն,
Ո՞վ է կոչում՝ մեկը ձոնել հաղարներին,
Ձոն ուր այնքան ելեէջներ կան հմայուն:
Ու՛մ ու՛մ կամքով են փոթորկվում հույզեր առատ,
Մայրամուտը վառվում այնքա՛ն ծանրաբարո,
Ո՞վ է որս կողմ սփռեալ ծաղկանց ըույլ անարատ,
Երբ սիրահար դուրգ է անցնում հալապարհով:
Տերևներից և անխորհուրդ, և՛ աննշան
Ո՞վ է արդյոք հյուսում պսակ պատվո, փառաց,
Ո՞վ է նեցուկն աստվածների ոլիմպիական
Ո՞ւժը մարդու՝ պոետի մտք հայտնագործված:

Գ Ն Ր Ա Մ Ո Ն

Գործադրեցեք այդ գեղեցիկ ուժը յզոր
Առաջ տարեք գործերը ձեր պոետական,
Ինչպես սիրո արկածներն են վարում այսօր
Հանդիպում ես սրատահաբար, տարվում, սակայն,

Վերանում ես և քիչ առ քիչ որոգայթվում:
 Մերթ ժպտում է, մերթ խոսափում քախտն անհաստատ
 Գերվում ես դու, տառապանքն է սրտիդ քարդվում,
 Մինչ սթափվես, սիրավեպն է արդեն պատրաստ:
 Լավ չէ՞ դուք էլ գրեք նման թատերգություն:
 Բայց խորամուխ եղեք կյանքի մեջ լիարյուն
 Ամեն մի մարդ իր կյանքն ունի՝ այլոց անհայտ,
 Ինչ էլ որսաք, հետաքրքիր կլինի շատ:
 Քիչ պարզություն, պատկերների ճոխ ու թանձրաբող,
 Քշմարտության մի կայծ, առատ մոլորություն,
 Ծվ պատրաստ է ըմսելիքը մեր լավագույն՝
 Ռդջ աշխարհը դվարթացնող ու նորոգող:
 Սերունդը նոր՝ երկրի ծաղիկն այդ գեղեցիկ,
 Կգա թստրոն հայտնություններ ունկնդրելու:
 Ամեն ցերմ սիրտ՝ ձեր հանճարի թովքին հյու,
 Իր տեսածից կաննի սնունդ մելամաղձիկ:
 Կծավալվի հուղմունք ամեն երիտասարդ
 Կտեսնի այն, ինչ կրում է մատաղ հոգում,
 Կարող է նա դեռ ծիծաղել, լալ հուսահատ,
 Նրա համար դեռ գին ունեն պատրանք, պոռթում:
 Չի գոհանա, ով շունի սիրտ երիտասարդ,
 Իսկ սկսնակ մարդը միշտ է շնորհապարտ:

Ք Ա Ն Ա Ս Յ Ե Ղ Մ

Որ այդպես է, կ'տ դարձրու դու
 Իմ հասակը պատանեկան:

Երբ աղբյուրը երգի հորդուն
 Երկնում էր նոր երգեր այնքան
 Երբ մշուշ էր աշխարհը ողջ,
 Հրաշքի մայր՝ ամեն ըողբոջ,
 Երբ ծաղկանց բույրն էր ինձ դյուբում
 Լեմեն դաշտում, ամեն հովտում:
 Հարուստ էի ես ոչնչով՝
 Ծշմարտության սլատիք տենչով
 Տո՛ւր անկաշկանդ հույզերս ինձ,
 Երջանկությունն իմ տանջալից,
 Ուժը սիրո, ստեղծության
 Հասսիկս տուր պատանեկան:

Ի Ն Ր Ա Ս Ա Վ

Զահեղություն ես փափագում, ի՛մ բարեկամ,
 Երբ թշնամիդ գոտեմարտում նեղում է քեզ,
 Երբ գեղանի աղջիկները կարոտակեղ
 Կախվում են քո պարանոցից ամեն անգամ,
 Երբ դժվարին նպատակի ճանապարհին
 Արագ վաղքի դափնին է քեզ կանչում հեռուն
 Երբ գիշերով հողմանման կայտառ պարին
 Հաջորդում է խրախճանքի տենդը եռուն:
 Մինչդեռ տրվել ավյունով լի
 Մանոթ լարի մեղմ նվագին,
 Զգտել անձուկ նպատակին
 Մոլորությամբ երանելի:

Մե ր պարտններ, ձե ր պարտքն է դա այս աշխարհում,
Դրա համար մենք ձեզ պակաս չենք մեծարում,
Հասակը մեզ չի մանկացնում ամենևին
Երբ գալիս է, մենք մանուկներ ենք տակալվին:

Գ Ն Ր Ե Կ Տ Ո Ր

Խոսքեր ենք մենք իդուր վատնում,
Թողեք տեսնեմ նաև գործերի
Ի ցո'ւյց հանեք քանքարը ձեր,
Ի՞նչ շահ վեճից այս անհատնում,
Ներշնչանքից ինչու՞ կառչել
Ո՞վ է տվել ծուլվին մուսա:
Թե բանաստեղծ եք ձեզ կոչել,
Քերթությունը թող ձեզ անաս':
Գլխեք, թե մեզ ինչն է հուզում
Թունդ խմիչք ենք ծծել ուզում:
Մի՛ հապաղեք: Ճիշտ է ամբան
Գործն այսօրվա մի թող վաղվան:
Զուր մի կորցրեք և ոչ մի օր:
Մարդ ինչ գտնի հնարավոր,
Պիտի որսա հաստատակամ:
Այնուհետև ոչ մի անգամ
Բաց չի թողնի գտածը նա,
Եվ գործն առաջ միշտ կընթանա:
Գերմանական բեմում, հարկավ,
Բախտ է փորձում ամեն մի մարդ:

Մի՛ խնայեք այսօր բնավ
Ոչ մեքմանս ո՛չ բեմազարդ:
Շուայեցեք դուք երկնային
Փոքր ու մեծ լուսատուներ,
Հուր ջուր, ժայռեր, աստղ ու լուսին,
Եվ գազաններ, և թռչուններ:
Նեղ տնակում այս փայտաշեն
Լնդգրկեցեք աշխարհն արար,
Դեզերեցեք խոհեմարար
Սրկնից երկիր մինչև գեհեմ:

Քանի որ դու նայել ես ինձ միշտ բարեհաճ
 Ահա վասիկ նորից կանգնած եմ քո առաջ:
 Ինչի՞ր, որ չեմ կարող ասել սիրուն խոսքի՞ր
 Քեկուղ ծաղրեն դրա համար քո լորը ինձ
 Բարձր ոճս քո ծիծաղը կշարժեր, Տե՛ր
 Բայց թե արդեն ձեռք ես քաշել դու ծիծաղից
 Արևներից, աշխարհներից ի՞նչ ասեմ քեզ
 Հասու եմ ես միայն մարդու տառապանքի՞ն:
 Փոքրիկ ասա՛վածն այդ ելկրային նույնն է կայծի
 հարօրինակ, ինչպես որ կար օրն առաջին:
 Այնտե՛ր՝ կապրեր կակն այդ տնկապրում
 Ե՛ւ շտայիր շողը լույսիդ Այդ ձիրքը նա
 Դատողութունն է անվանում և դորժապրում
 Որ ավելի քան անասունն տնտեսանա:
 Քող հանդարժի գթությանդ սրտըս կան
 Եթե ասեմ, որ յիրավի մարդն իմ աչքի՞մ
 Երկայնտան ճայտա է լսկ՝ շնչի՞ն այնքան
 Խոտերի մեջ ծար է տալիս միշտ երգը հին:
 Երանի չե՛ր, որ ստվերում մնալս իտտի
 Իողնես՝ ս մեն կեղտի մեջ էլ քիթ գխտի՛լ

Ն Վ Ե

Ելլու տեղի՞ք մի թե շունես
 Օտնդա՛տ պիտի միշտ լսեմ ես
 Ես վր ի կրկրու է հե՛ր գե մլ դե՛ս

Մ Ե Տ Ի Ս Տ Ո Տ Ե Լ

Ո՛ր էս այնտեղ ո՛ր մի լավ բան չեմ տեսել, Տեր
Մարդիկ այնքան են սղեացալ, խեղճ ու անկամ
Որ էս նրանց չկարող էմ ասնել յանդամ

Տ Ե Ր

Նստուշո՞ւմ ես դու հառատին:

Մ Ե Տ Ի Ս Տ Ո Տ Ե Լ

Այն դեկտորի՞ն:

Տ Ե Ր

Լմ ծառային:

Մ Ե Տ Ի Ս Տ Ո Տ Ե Լ

Անշուշտ նրա ծառայությունն այլ ձև ունի:
Երկրային չեն կերն ու խումն այդ խենթավուսի
Յնորքներով դեգերում է հեռաստանում,
Հազիվ է իր խենթությունից զուխ հանում
Տենշում է թե երկնի սատղերն ամենալավ,
Թե՛ երկրային ևրանություն, վայելք անբավ
Թայց ոչ մի բան՝ ոչ մերձավոր, ո՛չ հեռավոր
Չի ամորում հրա հոգու խռովքը խոր:

Ն Ե Ր

Թե այժմ էլ ինձ մոլորությամբ է ծառայում
Ծս ցույց կտամ նրան ուղին ճշմարտության
Չէ՞ որ հաստատ գիտե ամեն մի այգեպան
Ի՞նչ բար կտա իր տնկած շիվն ապադարում

Ո Ն Ջ Ի Ո Տ Ո Ջ Ե Ի

'Իրազ կգա՞ս 'Իս կկարցնես նրան նավեա
Նթե թողնես որ այսուհեա
Տանեմ ևս իմ ճանապարհով

Ն Ե Ր

Երկրամե և դեռ տար սպա սմ
Մարդը միշտ էլ կ'սխալվի
Երբ ձգտում էր կ'ընդհատվի

Ո Ն Ջ Ի Ո Տ Ո Ջ Ե Ի

Շնորհակալ եմ ընդհինց ՏԷԼ
ես ոչ մի գործ համ լսելի գի
Դիեթի հետ... և կյանքով լի
Դեմք հմ սիրում ևս ավելի
Մուկ է մարդը իսկ ևս կատո

Հ

Յ Ե Ր

Թող կատարվի ինչ ասիք դուք
 Մայր ակունքից ոգին զօտիր,
 Ցած տար, եթե ուժդ պատի,
 Սահայն կանգ տո ամոթահար,
 Երբ համոզվես՝ մարդը բարի
 Մութ ձգտման մեջ չի կորցնի հար
 Կարտու ճիշտ ճանապարհի:

Մ Ե Ն Ի Ս Տ Ո Ց Ե Լ

Ինչու բայց դու երբեք էլ չի հարատևի.
 Իրազը ինձ չի վախեցնում ամենևին,
 Եվ երբ հասնեմ նպատակին իմ ցանկալի,
 Թող հաղթանակն այդ վայելեմ ես չիռլի:
 Մի օր փոշի պիտի լսվի նա լինալաճան
 Լ մ մոռարոջ՝ հռչակափոր օձի նման

Տ Ե Ր

Թեկուզ այդպես ազատ կարուց ես գալ նորից
 Իանի օր ես քեզ պեսնեիրին չեմ ասել դեռ
 Ժիշտ ինձ համար ժխտման բոլոր ոգիներից
 Խորամանկն է ավելի քիչ համարվել բեռ
 Գործունյա մարդն այնքա՞ն է հեշտ ընդարմատում
 Վաղ է ձգտում անդարձության Իրա համար
 Նրան հիմա սիրով բնկեր կտամ հարմար

Որ դիվարար բորբոքի միտքն ամեն բանում,
Իսկ դուք, աստժո որդի՛ք ազնիվ, սքանչացի՛ք
Կյանքի անմահ գեղեցկութ՛յամբ շռայլ, գերող,
Եվ թող անվերջ ապրող, գործող ամեն տարեբք
Ձեզ պարուրի սիրո քնքուշ կապանքներով:
Ինչ հեղհեղուկ երևույթ է միայն անշող,
Վավերացրե՛ք մտքով սլայծառ և հավերժող:

(Որկինքը փակվում է, հրեշտակապետերը բաժանվում են)

Մ Ն Յ Ի Ս Տ Ի Յ Ն Ի

(Սիայնակ)

Հաճելի է ծերուկի մոտ երբեմն գալ
Ինչո՞ւ գժտվեմ, զուր բորբոքեմ զայրույթի օ լին
Ինչքա ն է լավ, երբ այսքան մեծ մի տիրակ էլ
Մտաճառի լուս խառնում մը թղթում սլին:

Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս

ԿԻՇԵՐ

Կոթական բարձրակամար, նեղլիկ սննջակում,
ցրասնդանի առաջ Տառասուն անհանգիստ բազմել
թիկնաթոռին

Ն Ա Ո Ն Ս

Ես թափանցեցի խորքն իմաստութեան,
Իարձաւ և՛ բժիշկ, և՛ իրավաբան,
Ավա՛ղ, գիտութեան անվերջ հետամուտ՝
Ե՛վ աստվածաբան դարձաւ ես հմուտ:
Սակայն մնացի անգիտը նախկին
Խելքով ու ձիրքով նույն մարդն եմ կրկին:
Մագիստր եմ, ունեմ կոչում դոկտորի,
Բայց ահավասիկ արդեն տաս տարի
Խարխալում եմ դեռ իմ սաների հետ
Անցել ենք մտքի ամեն արահետ,
Բայց գիտեմ, որ դեռ չգիտեմք ոչինչ,

Եվ դա չի տալիս ինձ դադար ու երնջ
 Խելոք եմ քան շատ տհասներ տափակ
 Մագիստր, դոկտոր, քահանա, գրչակ,
 Սին կասկածնորից չեմ տանջվել կյանքում,
 Ինձ դժոխք ու դե շեն ահաբեկում,
 Բայց չեմ ճաշակել դեռ ոչ մի վայելք
 Չեմ կարող դանել ճշմարտության ելք,
 Չեմ կարող յուսայ, թե որդուն հողի,
 Կուղղեմ, կուսուցեմ, ցայց կտամ ուղի
 Փողից ու փաստից կայրից դուրկ եմ ես
 Եվ չեմ բմբռնիմում կյանքը այլոց պես,
 Երկար չ'ը ասյրի շունն էլ ի՞նչ նման
 Ուստի արվեսցի ես կախարդությանս
 Որ՝ ոգու լեզվով, ուժով անսպաս
 Ես նոր գաղտնիքներ հանեմ յույ՝ աշխար
 Ամոթից քրանած երբեք յսեմ
 Չասեմ ուն ինչ, դեռ ինչ էլ չգիտեմ
 Խորհարգը մեկնեմ այս տիեզերքի
 Խորքը թափանցեմ նրա ընդերքի,
 Տեսնեմ ամենայն գործող ուժ ու սաղմ
 Եվ այսուհետև բաներ չ'որսամ:

Թե վերջին անգամ ո վ յուսին պայծառ
~~Տեսնեմ ինչ-որ բան, որ չեմ տեսնում~~
 Դու, որին այնքան նայել եմ անքուն՝
 Սեղանիս վրա խոնարհված նկուն,
 Տխո՛ւր բարեկամ, դու այն ժամահակ

Կհայտնվեիր ինձ մոտ շարունակ
Ա՛խ, թե վիճակներ քո լույսով արքած՝
Շրջել լեռների գրկում վեհապանձ,
Ոգիների հետ սավառնել անվիշտ
Քարձուկից քարձուկ և հովտից հովիտ,
Ըմպել անապակ ջողդ կենսավետ՝
Հեռու գիտության տանջանքից հավետ:

Ավա՛ղ, դեռ սյի ռի տանջվե՛մ այս քանտում,
Նշովյալ լինես, որմնախո՛րշ տրտում,
Որտեղ արևի լույսն անգամ վաղուց
Հազիվ եմ տեսնում ներկված ապակուց:
Պաշարված եմ ես գրքերի կուլտով,
Որ ծայրն է հասնում քարձր կամարի
Նվ ծածկված մրտա, խունացած թղթով
Փոշոտվում, կեր է դառնում որդիի:
Շարված են շուրջս ահա գործիքներ,
Տարբեր սրվակներ, անոթներ տարբեր
Ժառանգությունը հայրերիս ահա...
Քո աշխա՛րհն է սա և աշխա՛րհ է սա

Դու հարցնում ես դեռ ինչու՞ շարունակ
Հեծում է ահից տիրադ կրծքի տակ,
Ինչո՞ւ միշտ ինչ-որ կսկիծ անմեկին
Ձի թողնում՝ տրվես կյանքի բերկրանքին
Բնության ամբողջ հմայքը թողած.
Որի համար մա՛րդ արարելց աստված

Օխի, փոշու մեջ տքնելով այդպես,
Կմախքներով ես շրջապատել քեզ:

Փախի՛ր, հեռացի՛ր դեպի լույս աշխարհ:
Նոստրադամոսի գիրքն հրաշալի
Մի՞թե չի կարող այժմ քեզ համար
Կյանքի ուղեցույց դառնալ հուսալի:
Ի՞նչ կհասկանաս ընթա՛ցքն աստղերի,
Եվ երբ քո հոգին իմաստավորի
Մայր բնությունը յուր կամքով անհաս,
Ի՞նչ ոգիների լեզու՞ն կիմանաս:
Քեզ մեկնությունը սուրբ նշանների
Չի՛ տա, իմացի՛ր, շոք միտքդ երբևք:
Ի՞նչ շուրջս եք ճախրում, ոգինե՛ր բարի,
Քե յսում եք ինձ, պատասխան ն սվեք:

(Քաղսով և գիւղեր և տեսնում Սակրոկոսմոսի նշանը)

Լե . այս պատկերից ի նշ խի՞նդ է շորդում
Լցվում նյարդերիտ, երակներիս մեջ,
Շորձանք է տալիս կրկին իմ սրտում
Պատանեկան բորբ հրճվանք մի անչիջ:
Լեսովա՞ծ է գրողն այս նշանների,
Որոնք սանձում են մրրիկը հոշուս,
Խինդով սրտուրում իմ սիրտը անհույս
Եվ խորհրդավոր իմաստությամբ լի՛
Մեկնում բնության գաղտնիքներն սերտով,
Լեսովա՞ծ եմ շորս դիս այնպե՛ս լուսազամ

Երկնող բնության ուժն է յոգուս դեմ
Այս պարզ գծերից ճաճանշում, գիտեմ
Նոր եմ հասկանում խոսքն իմաստունի
«Բաց է միշտ աշխարհն այս կախարդական,
Բայց քո միտքն է փակ, սիրտդ հուր շունի:
Վե՛ր կաց, աշակերտ, կուրծքդ երկրային
Արշալույսի մեջ օժի՛ր խնդափին»:

(Իխում 1, նշանը)

Ինչպե՛ս ամեն բան միշտ ի մի հյուսված՝
Ապրում է, գործում ամենին ձուլված,
Ինչպե՛ս են ճախրում ուժերն երկնքի,
Իրար մեկնելով դույլերը ոսկի:
Սրհասք խնկարկող թևերով իջնում
Երկնի բարձունքից երկիր են հասնում,
Տիեզերքը ողջ լցնում դաշնությամբ:

Ինչպիսի՛ պատկեր, լայց ա՛խ լոկ պատկեր
Կընդդրկե՞մ ես քեզ, բնությունն անափ:
Որտե՞ղ եք, որտե՞ղ, ո՛վ սուրբ ստինքներ
Դո՛ւք որ սնում եք երկիր ու երկինք
Դո՛ւք, որոնց հիվանդ իմ սիրտն է տենչում
Դուք բխում, կյանք եք բաշխում ամենքին
Էլ ինչու՞ եմ ինձ ընդունայն տանջում:

(Իժկամուրեկն քերթում է գիրիը և լռեսնում երկրի
ոգու նշանը)

Այս սշանը ինձ այլ կերպ է հուզում
 Ինձ, երկրի՛ ոգի, մտտեմ զգում քեզ
 Ուժերս են արդեն հորդել սկսում,
 Այրվում եմ ահա նոր գիևուց ասես:
 Ուզում եմ աշխարհ նետվել համարձակ,
 Իրել երկրային քախտ ու տառապանք
 Մրրիկների դեմ անհաշտ մարտնչել,
 Ես վաթեկության ժամին շերկնչել:
 Շուրջս է մշուշվում,
 Լուսինը կորավ:
 Հալտերը հանգավ:
 Շոգի է ելնում: Գլխիս վերևում
 Փայլում են կարմիր ճաճանչներ նորից
 Սարսուռ է իջնում ահա կամարից
 Ու սիրտս սպառում: Զգում եմ արդեն
 Որ դու իմ շուրջն ես ճախրում վեհոր:
 Ողորմած ոգի Իջիր, հայտնվի՛ր
 Ինչպե՛ս է խոցվում սիրտս կրծքիս ասկ
 Իմ ողջ էությամբ
 Ես ր սպրտաններ եմ տենչում ես անհույ
 Մ'կ, քե՛զ է ձոնված սիրտս վշտալից
 Ես խոցվի՛ր, թեկուզ ես զրկվեմ կյանքից

Ինչպե՛ս է գիրքը և խորհրդավոր եղանակով արտասանում
 դու հռանաբանը Կարմրավուն բոց է բռնկվում. և բոգի
 միջից հայտնվում է Ոգին)

Ո Պ Ի

Ո՛վ է ինձ կանչում:

Պ Ա Ո Ւ Ս Տ

(Շրջվելով)

Ի՞նչ ահալորդ դեմք

Ո Պ Ի

Դու ինձ կանչեցիր ցանկությամբ համառ
Դու, ում սնել է իմ ոլորտը մայր,
Եվ արդ

Յ Ս Ո Ւ Ս Տ

Օ՛, նայել շեմ կարող երբեք

Ո Պ Ի

Քախանձում էիր, որ քեզ հայտնվեմ
Իմ ձայնը լսես նայես իմ դեմքին
Անսացի ահա քս թախանձանքին
Եվ եկա քեզ մոտ Թայց այս ի՞նչ նսեմ
Ջարհուրանք է քեզ պատել, ո՛վ գերմարդ
Ու՛ր է կանչն հոգուդ, այն սիրտը հպարտ
Որ մի աշխարհ էր ստեղծել իր մեջ
Եվ մեզ հասնել էր երազում անվերջ
Որտե՞ղ ես Ֆա՛ուստ դու որ ինձ կանչում

Քո ամբողջ հոգով ինձ էիր տենչում,
Դո՞ւ ես Ֆաուստը շունչս զգալով,
Դողում ու ինձ ես նայում սոսկալով՝
Փուշում սողապող հրկշտոս որդի պես:

Ֆ Ս ՈՒ Ս Տ

Քոցեղե՛ն ոգի, քեզ չեմ գիշի ես,
Չէ՞ որ Ֆաուստն եմ, հավասար եմ քեզ:

Ո Ղ Լ

Կենաց հորձանքում
Գործոց փոթորկում
Ես եմ անդադար
Ճախրում վեր ու վար:
Մնունդ ու վախճան՝
Մով հավերժական
Անդուլ մի սլապք,
Հրաշունչ մի կյանք
Ոյսպես դազգահի առաջ դարե՛րի
Հանգերձն հմ հյուսում ես աստվածների

Ճ Ա Ռ Ի Ս Տ

Ի՞նչ ողջ աշխարհն ես շրջում ծայրեծայր
Զունասեր ոգի ի՛նչ մոտ ենք իրար:

Այն ոգուն ես մտա որն անհաս չէ քեզ:
Ինձ հովասար շեռ:

(Անհայտանում է)

Յ Ա Ո Ւ Մ Տ

(Վշտացած)

Ո՛չ քեզ,

Հապա ո՛ւմ:

Համուպատկելին եմ ես աստվածության

Քեզ հավասար չե՛մ, քեզ չե՛մ նմանվում:

(Դուրս բախում են)

Քյողը տանի, նա է անպայման

Իմ օգնականը: Վերջացավ, ավաղ

Կգա, կցրի տեսիլն այս շքնաղ

Սյդ շոր ու պամսփ իմաստակն անբան:

(Գալիս է վագները՝ խալարով, գլխին գիշերային քասակ
յապտերը ձեռքին. Ֆառատը դժկամությամբ շրջվում է)

Վ Ա Ք Ն Ե Ր

Ներեցեք, ինչ-որ բան էիք կարդում

Ողբերգություն էր անշուշտ հունական:

Ճարտասանությունն ինձ էլ է դյուրում

Չէ՞ որ արվեստն այդ հարգի է այնքան,
Ասում են, թե այդ գործում քահանան
Այն խեղկատակից կուսանի շատ բան:

Տ Ա Ո Ւ Ս Տ

Սրբ խեղկատակ է քահանան նույնպես,
Ինչպես հաճախ է դա մեզ մոտ լինում:

Վ Ա Ք Ն Ե Ր

Ա՛խ, թանգարանին գամված ենք այնպես,
Որ տոներին ենք լույս աշխարհ տեսնում,
Այն էլ կարծես թե հեռադիտակով.
Ինչպե՞ս ուսուցենք մենք անդարդ խոսքով:

Տ Ա Ո Ւ Ս Տ

Սրբեք չեք հասնի ձեր նպատակին,
Սրբ ինքներդ եք դուրկ խոր զգացմունքից,
Սիլ հրք չի բխում խոսքն հոգու խորքից
Ու չի հմայում ունկնդիրներին:
Իսկ դուք նստեցեք, թուզթ մրտեցեք,
Խառնախորտիկներ միշտ պատրաստեցեք
Այլոց խնջույքի մնացորդներից,
Բոց դուրս կորզելով ձեր մոխիրներից՝
Նման ճաշակով դուք կզարմացնեք
Լոկ մանուկներին ու՝ պիկներին:

Սիրտը սրտի հետ չեք կապի երբեք,
Երբ սրտաբուխ չէ խոսքը լիովին:

Վ Ա Գ Ն Ե Ր

Խոսողը զիտի լինի ճարտասան:
Դեռ ետ եմ մնում այդ բանում այնքան:

Յ Ս Ո Ւ Ս Տ

Փնտրեցեք ազնիվ, պատվավոր վաստակ
Եվ մի՛ մնացեք անմիտ խեղկատակ:
Խոսքը, երբ իր մեջ ունի միտք ու խելք
Առանց արվեստի կգտնի միշտ ելք:
Եվ երբ խոհեմ է ասված խոսքն իրոք,
Աննպատակ չէ՞ բառախաղն արդյոք:
Ձեր խոսքերն իրենց փայլով արտաքին,
Որով դուք մարդկանց խաբում եք անվերջ,
Տաղտուկ են, ինչպես աշնան ցուրտ քամին:
Որն աղմկում է շոր ճյուղերի մեջ:

Վ Ա Գ Ն Ե Ր

Ա՛խ, աստված արվեստն այնքա՛ն է անհուն
Բայց կա՛րճ է այնպես կյանքը մարդկային:
Քննախոսում նմ զօր-զիշեր անքուն,
Բայց ահն է հաճախ պատում իմ հոգին:
Որքա՛ն է ծանր, որքա՛ն է դժվար

Իտնել ուղիներ, հասնել ակուսքին
Եվ ստեղծել շանցած անգամ կես-ուղին
Մեռնում ես, իբրև մի հետին թշվառ:

Յ Ա Ո Ւ Ո Տ

Մագաղաթ դա՛ է սուրբ աղբյուրը այս
Որով ծարավն են հագեցնում ընդմիջում:
Ո՛ր, շեռ վայելի բերկրանք իսկական
Իբր դա շի բխում ընդերքից սրտիդ:

Վ Ա Կ Ն Ե Ր

Սերեցեք, մի՞թե խինդ չէ մեծագույն
Չուղվել դարերի ոգուն, հետևել՝
Ինչպես է խորհել մի հին իմաստաստ
Ինչպես երբ նրա մտքին թև տվել:

Յ Ա Ո Ւ Ո Տ

Օ , այո , այո՛ , հասցրել աստղերի ու
Անցյալ դարերը, բարեկամ անգին,
Գիրք են մեզ համար յոթ փակով փակված:
Այն, ինչ կոչում եք դարերի ոգի,
Իրոք ոգին է դա հեղինակի,
Ուր ժամանակն է պարզ արտացոլված
Հոսարհատվում է մարդ հաճախ այնպես
Ուղում է փախչել ձեռքն առած գրքից

Ողջը հնոտիք, աղբ է պարզապես:
Մի քիչ այս կամ այն կարևոր դեպքից
Իսկ մնացածը խրատներ են սին՝
Վայել թատրոնին յոկ տիկնիկային:

Վ Ա Ք Ն Ե Ր

Հապա աշխա՞րհը, սիրտը և հոգի՞ն
Ո՞վ շի երազում սրանք հասկանալ:

Ֆ Ա Ո Ւ Ս Ց

Այո, նայած ի նշ, ինչպես ս: Նորածնին
Ո՞վ կտա արդյոք անուն անսխալ:
Ով թափանցել է խորքն այս խորհրդի
Չի սանձահարել խոյանքն իր սրտի
Եվ ամբոխի դեմ իր սիրտն է բացել,
Խաչվել է կամ թե խարույկ բարձրացել:
Ռայց ուշ գիշեր է արդեն, բարեկամ
Եկ հետաձգենք զրույցն այս սնգամ

Վ Ա Ք Ն Ե Ր

Սիրով ես անքուն կմնայի դեռ
Որ մեր գիտական զրույցն երկարեր:
Վաղը Ջատիկ է. հուսով եմ՝ այսպես
Մի քանի հարց էլ ձեզ կտամ դարձյալ:

Խենթ եմ գիտութեան շատ բան գիտեմ եւ
Բայց ամեն ինչ եմ ուզում իմանալ:

(Գնում է)

Ձ Ա Ո Ւ Ս Ց

(Միայնակ)

Լի է հույսերով սիրտը շարունակ
Անմիտ են թեև գործերն անհատնում
Գանձ է որոնում նա ձեռքով անհագ
Եվ գոհ է, եթե որդեր է գտնում:

Իսկ պե՞տք է հնչեր այստեղ ձայնը այ՛
Ուր շունչն եմ զգում ես ոգիներին
Բայց, ա՛խ, այս անգամ քեզնից գոհ եմ շու
Ո վ թշվառագույն զավակդ երկրին
Վհատութունից ինձ փրկեցիր դու
Որ սղտորում էր մտքերս բոլոր
Ա՛խ, տեսիլն այնքան վեհ էր, ահարկ
Որ ես ինձ թզուկ զգացի անզոր:

Ոս, պատկերն աստծո, որ կարծում էի
Մոտ եմ հայելուն սուրբ ճշմարտութեան
Երկնի փայլի մեջ, անաղարտութեան
Ինձ դասում էի շարքն անմահների
Ես տոավել բան հանդուգն քերովրեն

Իր կարծեց ազատ իր ուժն է արդեն
Հորդում բնութիան սրտում անարգել
Ըմբռնչխնելով կյանք աստվածավայել,—
Ինչպի՞ս բավիմ սու : Ինձ շանթե՞ց մի խոսք

Իզուր գարծեցա, սր քեզ եմ Նման
Ես կարողացա քեզ կանչել միայն
մահայն ո՛չ պահել, ոգի անողոք
Լե՛խ, ակնթարթում այն երանելի
Չնչին, բայց և մեծ զգացի ես ինձ :
Դու ինձ յետեցիր ուժով ահռելի
Մարդկային բախտի մութ վիհը նորից
Ո՛վ կասի՝ ինչի՞ց հրաժարվեմ ես
Կամ արդյոք անսա՞մ իմ ողորմահին
Ա ի մեր գործերն էլ մեր վշտերի պե
Փակում են անվերջ մեր կյանքի ուղին

Ոգուդ վայելած հրաշալիքիս
Խառնվում է ինչ-որ խորթ բան շարունակ
Երբ հասնում է մարդ կյանքի բարիքին
Հավը թվում է ցնորք ու պատրանք
Մեզ կյանք սնուցող հույզերն են անվերջ
Խամբում երկրային ունայնության մեջ

Սիբ խիզախորեն միտքդ ես հուսալսու
Պարզում հավերժին, ապա քեզ համար
էլ պետք չէ մեծ տեղ թե մամսնակի

Հորձանուտան հանկարծ բախտդ խորտակի:
 Սրտիդ խորքերում հոգան է բուլն դնում,
 Անթիվ, անմեկին ցաղիերով լցնում,
 Անվերջ խափանում հանգիստ ու բերկրանք
 Եվ իր դիմակն է փոխում շարունակ
 Մերթ մանուկ է դա, մերթ կին, մերթ էլ տուն,
 Մերթ հուր է, մերթ ջուր, կամ դաշույն ու թույն
 Քեզ շապանացող վտանգից տոսկում,
 Չկորցրածդ ես ողբում ու սգում:
 Ի՛նչ, հավասար չե՛մ ես աստվածներին:
 Խորն եմ ես զգում, էակս շնչին,
 Կման եմ փոշում սողացող որդի,
 Որին ճզմում է ոտքը անցորդի:

Իրերի պատն աչս՝ կանգնած իմ շորս դին,
 Մի՞թե փոշի չէ խցիս խավարում,
 Փոշի չէ՞ իմ ողջ ունայն հնոտին,
 Որ ճնշում է ինձ աչս ցեցաշխարհում:
 Ես այստե՞ղ պիտի գտնեմ ինչ շունեմ:
 Բյուր գրքեր պիտի կարդամ, որ տեսնեմ
Ամենուր է մարդ գառը կյանք վարում,
Որ բախտավորներ քիչ կան աշխարհում:
 Ի՞նչ ես ծիծաղում վրաս, թափո՛ւր գանդ
 Քո տերն էլ մի օր մթնում ինձ կման
 Խարխափել է զուր, որոնել բերկրանք
 Ու ճշմարտություն, խաբվել է սակայն:
 Դուք էլ եք ծաղրում ինձ, ի՛մ գործիքներ

Ք Եր առամներով, աղեղներով ձեր
 Պիտի բանալի դառնաք իմ ձեռքին,
 Բայց փակ է մնում դուռն իմ դեմ կրկին,
 Տերեկվա լույսով բնությունը մայր
 Ձի բացում շղարշն իր դադունիքների,
 Նա ինչ մութ սլահի քո ոգու համար,
 Ոչ մի գործիքով դու ձեռք չես բերի:
 Ինձ պետք չես, ո՛վ հին գործիք հասարակ
 Դրված ես այստեղ լոկ հորս պատվին:
 Մրով կծածկվես դու, հի՛ն ճախարակ,
 Որքան այս լամպը ծխա սեղանին:
 Լավ չէ՞ր՝ աղքատիկ կայքս վատնեի
 Քան այս մանրուքի վրա քրտնեի:
 Այն, ինչ հայրդ քեզ թողել է ավանդ
 Ինքդ վաստակիր, որ պահես հաստատ:
 Բեռ է իրն անպետք, և քեզ պետք է այն,
 Ինչ տա երկունքով վայրկյանը միայն:

 Այն սրվակն ինչու՞ մագնիսի նման
 Իր կողմն է ձգում հայացքս այս պահի՛ն
 Եվ սիրտս ինչու՞ լուսացավ այսքան,
 Ինչպես լուսնյակից՝ անտառը մթին:

 Ողջո՞ւյն քեզ, գալաթ: Անոթն ես միակ,
 Որ վայր եմ բերում խոր ակնածանքով,
 Նայում եմ, քո մեջ տեսնում հիացքով
 Մարդկային արվեստն ու միտքը անհագ:
 Ո՛վ քովանդակիչ հրաշք հյութերի,

Ակունք մահառիթ բոլոր ուժերի,
Քո տիրոջ հանդեպ քարեհաճ եղիր:
Երբ նայում եմ քեզ, ջալս է ամոքվում,
Երբ վերցնում եմ քեզ, ձգտումս է սանձվում
Պոռթկումն է զսպվում ոգուս հեղեղի:
Ելնում եմ քայ ծով՝ իմ ոտքերի տակ
Մակընթացության հայելին հստակ
Ինչպի նոր ափ է կանչում օրը նոր:

- րևդեն մի կառք օդում ճոճվելով
Ինձ է մոտենում: Պատրաստ եմ սրդեն
Եթեր վերանալ նոր ուղիներով,
Ելնել ոլորտներ նոր ու լուսեղեն:
Իերեկրային կյանք, խինդ աստվածային
Բայց մի՞թե սրան արժանի ես, որդի
Թո՛ղ, թո՛ղ վճուրքար արեն երկրային,
Նրանից երե ս դարձրու անհողդողդի
Խիզախի՛ր, փշրի՛ր ամենայն դարպաս
Որի առաջ լոկ սողում են նկուն:
Ժամ է քո գործով դու պետք է ցույց տաս
Որ ադամորդին չի զիջում աստծուն
Որ չի երկնչի նա ամենևին,
Երբ մտնի անդամ անձավն այն մթին
Որի երախում միտքը սնուտի
Ողջ հուրն է վառել սանդարամետի:
Վճոխի ը, մի՛ սոսկա վտանդից մահ լան
Թեկուղ և անցնես գիրկն անէության:

Քյուրեղյա գավաթ, վայր իջիլ կրկին
 Գո՛ւրս եկ լույս աշխարհ պատյանից քո հիւ
 Մոռացված էիլ երկար ժամանակ,
 Փայլել ես դու իմ նախնայ տոներին
 Ըն զվարթացրել խոժոռ հյուրերին,
 Երբ քեզ են իրար մատուցել նրանք,
 Հիշում եմ մանկութ շատ օրեր ցնժուն,
 Գիշերներն այն, երբ ամեն հյուր ախտեղ
 Գովում էր հանգով նախշերդ շքեղ,
 Մեկից դատարկում գավաթը լեցուն:
 Այժմ ոչ ոքի ես քեզ չեմ մեկնի,
 Ձիրքս այդ արվեստում ի ցույց չեմ հանի:
 Արրեցնում է այս հեղուկը իսկույն
 Ես խորքդ եմ լցնում հյութը դարչնագույն
 Ինքս եմ ատեղծել, ինքս եմ ընտրել այն,
 Եվ դա թող լինի խմիչքն իմ վերջին,
 Թող լինի ողջույն, ողջույն սրտագին՝
 Արև ավետող նորարաց օրվան:

(Գավաթը մոտեցնում է շուրթերին)
 (Ձտնգերի դողակց և խմբերգ)

Լ Ր Ե Շ Տ Ա Կ Ա Ե Ո Ւ Մ Ք

Քրիստոս հարյալ: Երանությո՛ւն
 Մահկանացու ազամորդուս
 Որ կաշկանդված էր ամենալն:

Արատներով ժառանգական՝
Դարանակայ և սպակուն:

Յ Ա Ռ Ն Ս Տ

Ի նշ խոր մեղեդի, ի՞նչ մրմունջ է սա
Որ ետ է քաշում թասն իմ շուրթերից
Ղողանջո՛ղ զանգեր մի՞թե դուք հիմա
Հարության ժամն եք ավետում նորից:
Սփոփման ե՞րգ եք լսում, երգիչնե՛ր
Ինչպես զվարթնոց դասը այն դիշեր
Դագաղի առաջ երդով երկնային
Սկիզբ դրեց նոր Կուակարսնին:

Կ Ա Ն Ա Ն Ց Ե Ո Ւ Ս Ը

Մյուտոնով լսոտա
Սարմինն օծեցինք
Մարմինն անարատ
Շիրիմ իջեցրինք:
Երիզ ու կտավ
Զգեցինք վրան
Բայց, ա՛խ, ի՞նչ եղավ
Չենք տեսնում նրան:

Հ Ր Ե Շ Տ Ա Կ Ս Ե Ռ Ն Մ Ո

Քրիստոս հարչա՛վ, Քրիստոս չարչա՛վ:
Փա՛ռք սիրողին որ դիմացսի

Փորձութեանը այս տիրապի
Փրկարար և ուսանելի

Տ Ա Ո Ւ Ս Տ

Երկնային ձայներ, բաղցր ու տիրաբար
Ի՞նչ եք ինձ կանչում՝ փոշում տանջվողիս
Հնչեցեք լոկ մեղմ սրտերի համար,
Նս հավատ շուսեմ ընդերքում սրտիս
Հրաշքն է միայն հավատո որդին—
Չեմ փորձի հասնել ես այն ոլորտին
Որտեղից թովյիլ ավետիքն հնչեց,
Բայց մանկուց ծանոթ երգը դյուրեակալ
Ահա վերստին ինձ կյանքի կոչեց,
Անցյալում, շաբաթ օրերին, դեմքիս
Համբուլյրն էր իջնում երկնային սիրո՞
Չանգերի ազդու զողանջի ներքո
Բոցավառվում էր աղոթքից հոգիս
Ինչ-որ մի կարոտ անմեկին, անծայր
Ինձ գիրկն էր մղում դաշտի, անտառի
Եվ հեղեղի տակ ջերմ արցունքների
Նս զգում էի իմ մեջ նոր աշխարհ:
Երզն այս հիշեցրեց հասակս կայտառ
Ազատ, անկաշկանդ հրճվանքն իմ գարնան,
Ետ են ինձ պահում հուշերս պայծառ
Իմ վերջին քայլից ճակատագրական
Հնչեցե՛ք, անո՛ւշ երգեր երկնային,
Լերդունքս է հորդում երկրի՞նն եմ կրկին

Ա Ռ Ա Ք Յ Ա Լ Ն Ե Ր Ի Խ Ո Ւ Մ Ք

Տերը հանգուցյալ
Երկինք է հառնում
Վե՛հ կյանք երանյալ
Ու վե՛հ համբարձում:
Նա մոտ է արդեն
Արարիչ խինդին .
Ա՛խ, մեզ կտանջեն
Ցավերն երկրային:
Մեզ թողեց անծայր
Կսկիծ ու վշտեր:
Ա՛խ, բախտիդ համար
Մենք լալիս ենք, Տեր:

Հ Ր Ե Շ Տ Ա Կ Ա Խ Ո Ւ Մ Ք

Քրիստոս հարյալ ի մեռելոց
Թողեց ընդերքն ապականման
Թոթափեցեք խինդով գալոց
Կապանքները ձեր ամենայն:
Ձեզ, որ նրան փառաբանում,
Սեր ու հավատ եք սերմանում,
Եղբայրաբար մարդկանց սնում,
Քարոզելով ճամփա անցնում,
Երանություն եք խոստանում,
Ձեր Տերը ձեզ մոտ է հավետ,
Նա արդեն ձե՛րն է այսուհետ:

ՔԱՂԱՔԱԴՌԱՆ ՍՈՏ

Զանազան զրուստղիներ դուրս են գնում

Ս Ի Ք Ա Ն Ի Ա Ր Հ Ս Ս Ա Վ Ո Ր-Ա Շ Ա Կ Ե Ր Տ

Այդ ո՞ւր բարով:

Մ Ի Ո Ղ Ս Ե Ն Ե Ի Ի

Զգարանի ճանապարհով

Ս Ռ Ա Ջ Ի Ե Ե Ե Ր Ր

Մենք ջրաղաց պիտի դնանք

Ա Ի Ա Շ Ա Կ Ե Ր Տ

Խորհուրդ կտամ՝ ափը լճի:

Ե Ր Կ Ր Ո Ր Գ Ր

Ճանապարհը դժդեցիկ լի:

Մ Յ Ո Ւ Ս Ե Ո Ղ Մ Ր Ը

Դու ո՞ւր:

Ե Ր Ր Ո Ր Գ Ը

Այնտեղ ուր որ նրանք:

Չ Ո Ր Բ Ո Ր Դ Ը

Գլուղ դնացեք և կգտնեք այնտեղ իսկույն
Հավ գարեջուր ու աղջիկներ շքնաղագույն
Նաև ընտիր տուրքօրմբոց, վայել գլուղին:

Հ Ի Ն Վ Ե Բ Ո Ր Դ Բ

Այ կռվարար անտանելի,
Քո՞ր է գալիս մաշկդ էլի:
Այնտեղ շեմ գա ես երկյուղից:

Ա Ղ Ա Խ Ի Ն

Ոչ ոչ, ետ եմ դառնում դեմ ես իմ գործին:

Մ Յ Ո Ւ Ս Ի

'Իուցե արգեն բարգիների մոտ է կանգնած:

Ա Թ Ա Ջ Ի Ն Է

Դա ինձ հասար երջանկութեան շէ առանձին:
'Իիտեմ, նորից քեզ հետ կգա նա անկասկած
Ոչս անգամ էլ միայն քեզ հետ նա կպարի:
Բ: հրճվանքր ինձ ի՞նչ, սոսա քույր իմ բարի:

Մ Յ Ո Ւ Ս Ի

Մենակ շէ նա կարծեմ աջօր
Հետն է տղան խոսքուպավոր:

Մ Լ Ա Շ Ս Կ Ե Ի Ն

Պահ, մի նայիր ի՞նչ աղջկերք յայտնվեցին
Արի, եղբայր, մոտենանք այդ սիրուններին,
Թունդ դարեջուր, լավ ծխախոտ, դիրկ աղջկա—
Իմ ճաշակը, իմ սպառնալից և որ կա:

Ի Ա Ն Ս Ի Ա Ն Ա Ն Ջ Ի Կ

Մի տես այս լավ տղաներին,
Ի՞նչ տեսարան է խայտառակ
Ընտիր շրջան կմտնեին,
Թայց անում են որս հասարակ:

Ե Ր Կ Ր Ո Ր Ի Ա Շ Ա Կ Ե Ր Ն

(Առաջինին)

Մի շտապիր նայիր, երկուսն էլ են գալիս
Ի՞նչ գեղեցիկ են հագնված:
Մեկն աղջիկն է հարևանիս,
Ի՞նչ նրանով շատ եմ տարված
Լալիս են Կես դանդաղ արևքան
Թայց թե իրենց հետ կտանեն մեզ սնուցալուծ:

Ո Ռ Ա Ջ Ի Ն Ը

Ո՛ր, իմ եղբայր, ես չեմ սիրում զուր շարժարվծի
Շո՛ւտ, կարող է փախչել որսը հարմար պահի:

Այն ձեռքը որ շաքաթ օրն է թռնում ավել,
Կիրակի օրն ամենից լավ կփայփայի:

Մ Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի

Վրտուլս չէ քաղաքապետն այս նորընտիր
Եւ օրեցօր ավելի է հանդդսանում,
Յայց քաղաքի համար ի՞նչ է արածը իր,
Ամեն ինչ էլ արդեն դեպի վատն է դնում:
Գլուխներս ավելի շա՞տ մենք խոնարհենք
Եւ ավելի՞, քան երբէք, հարկ վճարենք:

Մ Ո Ի Ր Ա Յ Կ Ա Ն,

(Երգում է)

Շքեղ զուգված ու վարդերես
Բարի տիկնայք ու պարզնարք,
Տեսեք՝ ինչքան թշվառ եմ ես
Գուցե օգնել ինձ կամենաք:
Թող լարերս շնչեն զուր...
Խեղճին օգնողն է բախտավոր:
Բողոքն ուրախ են ամենուր,
Իս էլ հրճվեմ թող դեթ մի օր:

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի

Ի հտե՞ս ինչն է ամենալավ թանն ինձ յամար
Կ լիկո խոսել ամեն շաքաթ ու կիրակի,

Պատմել ինչպես ծանկատանում աղոթերն իրա՛յ
Սրի քաշում, ջնջում, մատնում են կրակի՛
Պատուհանի առաջ խմում գավաթը քո,
Դիտում ես լուռ գետով անցնող նավերն անթիվ,
Երեկոյան վերադառնում քո տունը դո՛հ,
Խաղաղութիւննն էս դու օրհնում գիշեր ու տիվ։

Ս Ի Ր Ո Ր Դ Ք Ա Կ Ա Ք Ս Յ Ի

Այո, դրկից, դրան էս էլ եմ համաձայն.
Թող միշտ նրանք իրար դուրիս ջարդեն այդպես,
Թող ամեն ինչ այնտեղ լինի հիմնակործան,
Միայն թե դու ոչ մի վնաս չսերի մեղ։

Մ Ի Պ Ա Ռ Ա Լ

(Քաղաքացի աղջիկներին)

Ի՛նչ նազելի, մատաղ կույսելի
Նայողն ինչպե՛ս շկախարդվի՛
Լսեք խոսքը խեղճ սլառավի
Ես կճարեմ ուզածը ձեր։

Ք Մ Ղ Ա Ք Ա Յ Ի Ա Ղ Յ Ի Կ

Սկ Ազաթե, շուտ հեռանանք։ Կարիք չկա
Այդ վհուկին մոտենալու բացեիրաց։
Դա էր, ո՛ր Սուրբ Սնդրեասի դիշերն ասաց,
Թե ո՛ր տղան է փեսացուն իմ ապագա։

Մ Յ Ո Ւ Ս Ը

Ի մախտն էլ է դա ցուլց տվել մյուրեղի մեջ
Նևսա ոաղմիկ էր փեսացուս՝ շուրջը քաջեր
Չորս կողմ նայում, որոնում եմ նրան անվերջ,
Բայց թե ինձ հետ նա հանդիպել չի ուզում դեռ

Զ Ի Ն Վ Ո Ր Ն Ե Ր Ի

Թարձր ու անառիկ
Թուրք քերդերին
Ծվ շնաշխարհիկ
Կանանց սրտերին
Տիրացիր, ոաղմիկ,
Ձգտիր աննահանջ
Վարձն է հիասքանչ:

Թող հնչեն փողեր
Ժամին խնդության
Ծվ կորստաբեր
Ժամին պարտության
Դա գրոհն է մեր,
Կյանքը հավիտյան:

Նվաճենք քերդեր,
Կանացի սրտեր,
Ձգտենք աննահանջ
Վարձն է հիասքանչ,
Ծվ երբ տիրանանք
Նորից հռանաւնք

ՏԻԱՌԱՄ և ՎԱԳՆԵՐ

Տ Ա Ո Ւ Ս Տ

Գարնան կենարար հայացքի տակ
Սանձազերծ եղան գետ ու վտակ,
Կանաչեց բախտի հույսը հովտում,
Եվ ծեր ձմեռը քաշվեց տրտում
Խոժոռ լեռների դիրկն սպիտակ—
Անզոր նահանջեց ու իր վերջին
Ջրունե տարափն է նա տեղում ցած
Փովելով դաշտի թարմ կանաչին:
Բայց ճերմակութունն այդ ուշագած
Արևը արդեն չի հանդուրժում
Երփնեխանգում է նա ամեն իսկ
Չորս կողմ ծավալում հեք ու շարժում:
Տես, ծաղիկները դեռ շատ են քիչ
Նրանց մարդիկ են փոխարինում:
Կալիք բարձունքից դու քաղաքին:
Մռայլ դարպասից սհա կրկին
Մեմբոխն շտապով դուրս է ելնում
Վայելում արևն այս անհատնում
Տիրոջ Հարության տոնն է տոնու
Քանպի ինքն էլ է հառնել այսօր
Անձուկ փողոցից բազմաժխոր,
Մանրության տակից տանիքների

Յաթրիկ հեղձուցիչ տնակների
 հաղտուկ արհեստի կապանքներից
 Ծվ եկեղեցու սուրբ խավարից
 Մարդիկ ի լույս են ելել նորից:
 Նայիր, ինչպես են դաշտ, անդասուտ
 Լցվում թաղմությամբ խայտաբղետ,
 ինչպես է դետն իր հոսանքի հետ:
 Տանում նավակներ ուրախությանս
 Տես սուզվելու լափ ծանրաբեռնված
 Լերջին մակույկն էլ արդեն դնաց:
 Լեռան հեռավոր շավիղներից
 Իջնում է ամբոխն այն գունազեղ
 Կյուղի ժխորն եմ լսում նորից:
 Լիստեղ եմ տեսնում, միայն այստեղ
 Ըս ժողովրդի երկինքն անամպ,
 Լիստեղ մարդ եմ ես մարդ իրավամբ

Վ Ա Փ Ն Ե Ր

Նու հետ շրջելի՛ր ինչ խոսք պարսմ
 Պատվաբեր ման է, թայց այն էլ կս
 Որ այստեղ մենակ ես շէի գա
 Խորթ է ամբոխն ինձ կոպտաբարս:
 Կոնախաղ, ջութակ ու գոռոցներ
 Լիտում, տանել շեմ կարողանում:
 Գոռում են ինչպես դիվահարներ
 Եվ դա երդ, հրճվանք են անվանում

Պուղազիները լորենու տակ

Երգ և պար

Հովիվ տղան սիրակարոտ
Հագավ բաճկոն, կապեց նսրոս
Ու դուրս եկավ պարի:
Հոժ ամբոխը լորենու տակ
Նվազում է արդեն ջութակ
Պարում խանդով վալրի:

Տղան շրջան մտավ թափով,
Հավեց իր կոշտ ձեռքի ավտով
Ուսին մի աղջկա:
Մատաղ աղջիկն ալդ Կեկատեց
Եվ տղային նա նախատեց
— Քեզնից անսիրտը կա՞:

Բալց փոթորկվեց շրջանն ուրախ
Պարեցին աջ, պարեցին ձախ
Թռան արագ, առույգ,
Եվ շիկնեցին, և տաքացան
Եվ թև թևի հանգստացան
Չուլած ազդր ու արմունկ:

— Ալդքան աղատ մի պահիր քեզ
Ինչքա՞ն շատ եք խաբում այնպի:
Աղջիկներին սիրած

Թայց տղան էր նրան փառվում,
Եվ ջութակն էր հնչում հեռվում
Ժխորի տակ մարդկանց:

Մ Ի Մ Ե Ր Գ Յ Ո Ւ Ղ Ա Յ Ի

Պարոն դոկտոր, լավ եք արել
Որ մեզ դուք շեք արհամարհել
Եվ լինելով ընտիր դիտուն,
Մեզ խառնվել, կյանքն եք դիտում
Ահա դավաթն ամենալավ,
Որ լի է թարմ ըմպելիքով,
Ցանկանում եմ ամբողջ հողով
Որ հագեցնեք ամեն ծարավ,
Թազմապատկեք օրերը ձեր
Ինչքան այտեղ կան կաթիլներ:

Տ Ա Ո Ւ Ս Տ

Ըմպելիքով այս դովարար
Մաղթում եմ ես ձեզ կյանք երկար:

(Թազմություն է հավաքվում):

Մ Ե Ր Գ Յ Ո Ւ Ղ Ա Յ Ի

Այսօր օր է ուրախության
Եվ դուք եկաք: Լավ եք արել:
Օրերին էլ դժբախտության

Օգնել, մեզ շեք արհամարհել:
 Շատերն են ողջ կանգնած այստեղ՝
 Երախտապարտ ձեզ ողջ կյանքով,
 Հազիվ փրկված ձեր հոր ջանքով
 Սև ժանտախտի ճանկից ահեղ:
 Երիտասարդ էիք անփորձ,
 Բայց միշտ վազում հիվանդանոց
 Եվ անվնաս էիք մնում,
 Երբ ամեն տեղ մարդ էր մեռնում
 Ձեզ՝ օգնողին մեր երկրային,
 Օգնեց օգնողն այն երկնային

Բ Ո Ղ Ո Ր Ը

Ձեզ երկար կյանք, շաջողութուն
 Որ միշտ օգնեք թշվառ մարդուն:

Ֆ Ա Ո Ւ Մ Ց

Օրհնեք նրան, ով մեզ օգնում
 Եվ օգնել է ուսուցանում:

(Վազների հետ հեռանում է)

Վ Ա Գ Ն Ե Ր

Մե՛ծ մարդ ի՛նչ հուզո մ կտիրի հոգուդ
 Սյս հոծ բազմության հայ գանձն ղգալիս
 Օ՛, նրա՛ն եմ ես նրանի տալիս,

Ում ձիրքն է բերում այսպիսի օգուտ:
 Հայրն է իր որդուն քեզ ապավինում,
 Քույրն են տեղում հարցեր անհատնում,
 Լուսն են իսկույն ջութակ, երգ ու պար
 Քեզ են շարք կանգնած տալիս ճանապարհ,
 Կյիսարկներ են օդ նետում խնդադեմ
 Եվ քիչ է մնում՝ ծունր իջնեն քո դեմ,
 Լրբե սրբության:

Տ Ա Ո Ւ Ս Տ

Հասնենք այն քարին՝ ընկած անխոռվ,
 Մեր թախառումից քիչ հանգստանանք
 Ինչքա՞ն եմ նստել մտասույզ, մենակ,
 Ինձ տանջել պասով ու աղոթքներով:
 Հաստատ հավատով, հույսով աներեր
 Հեղելով արցունք ու հառաչանքներ,
 Ես դիմում էի Տիրոջն երկնային,
 Թախանձում վերջ տալ ժանտախտին մահին:
 Մափե՞ր հնչում է հեզանքի նման:
 Թե թափանցեիր խորքը իմ սրտի,
 Օ՛, կիմանայիր, թե հայր ու որդի
 Որքա՞ն արժանիք ունենք մեծարման:
 Հայրս պարզունակ մի մարդ էր քարի:
 Եվ ազնվորեն, յուրովի սակայն,
 Ստորում էր միշտ շուրջը բնության,
 Նրա սրբազան հոլովումների:

Համախոհների ընկերակցութեամբ
 Սև խոհանոցում երկար ու բարակ
 Վերծանում էր նա ամեն դեղաշափ
 Միաձուլելով նյութեր հակառակ:
 Կարմիր առյուծն ու շուշանն ամոթխած
 Պսակվում էին բաղանիքում տաք,
 Ապա երկուսով՝ բոցավառ, տանջված
 Ուր էին դնում նոր հարսնասենյակ
 Իմ ապակու մեջ զուգսով գունագեղ
 Մատաղ թագուհին ինքն էր ցոլանում:
 Դեղն այս էր Մարդ էր մեռնում ամեն օր
 Ով ապաքինվեց՝ ոչ ոք չէր հարցնում:
 Այս դժոխային շփոթով գինվել,
 Մահ էինք սփռում դաշտում, լեռներում
 Այո, ժանտախտից վատթար առավել:
 Քանիսի՛ն էի ես թունավորում
 Նրանք թռչնեցին, իսկ ես մնացի,
 Որ գովքը լսեմ նենգ ոճրագործի:

Վ Ա Գ Ն Ե Ր

Ենչու՞ եք տխրում դուք դրա համար
 Վա՛տ է, երբ մի մարդ բարեխղճորեն
 Լոկ այն արվեստն է հանում լույս աշխարհ
 Ինչ ուրիշներն են ուսուցել իրեն:
 Թե մանուկ ես դեռ, քո հորն ես հարգում
 Եվ ամեն ինչ ես ընդօրինակում:

Թե գիտութեանն ես արդեն նվիրվել
Ոյդիդ կձգտի բարձրին առափել:

Ն Ա Ո Ւ Ս Ց

Ի յանի նրան, ով հույս ունի դեռ
Իւրս գալու ծովից այդ մոլորութեան
Զիմացածն է մարդ երազում միայն,
Իսկ իմացածին շի էլ կանգնում տեր:
Սակայն այս պահի բարիքն հիասքուն
Իկ շղառնացնենք խոհերով տխուր:
Տե՛ս, մայրամուտի լուսից ամենուր
Ինչպե՛ս են շողում հյուղերը կանաչ:
Որը ավարտվեց: Արևը գնաց
Մյուս կողմն աշխարհի, որ կյանք պարգևի:
Ափսո՛ս, որ շունեմ թևեր սրբնթաց
Զեմ կարող սուրալ հետքով արևի
Վերջալուսի մեջ հավիտենական
Կտեսնեի ողջ աշխարհի հեռուն՝
Խաղաղ հովիտներ, լեռներ հուրհրան
Ոսկեծուփ գետին խառնվող առուն:
Զէր սանձի սլացքն աստվածավայել
Ո՛չ մի վայրի լեռ՝ վիհերով անտակ:
Մովն իմ հայացքը միշտ կփայլիայեր
Կիովեր իմ դեմ խորշերով իր տաք:
Սուզվից դիցունհին, բայց տենչ զարթնեց նոր
Սուրա՛լ լո՛ւյսն ըմպել մշտնջենական:

հտևում գիշեր, առջևում վառ օր
 վերևում՝ երկինք, ցածում՝ ծով միայն,
 Գեղեցի՛կ պատրանք, զմայլա՛նք հոգու
 Ավա՛ղ, երկրային ո՛չ մի զորեղ թև
 Չի կարող այնպես սավառնել թեթև
 Ինչպես թևերը երկնային ոգու
 Սակայն քնածին սովորույթն է մեր
 Լեռաջ է մղվում միտքը աննկուն
 Երբ մի արտույտ է սլանում եթեր
 Հեղում վերևից երգն իր զրնգուն
 Երբ սոճիների կատարներից վեր
 Արժիվն է ճախրում՝ լայն թևերը բաց
 Կամ երբ անցնելով դաշտեր ու ծովեր
 Սուրում է կռունկ մի հալոնարադ՝

Վ Ա Ք Ն Ե Ր

Ինքս էլ եմ տանջվել պահերին թախծի
 Բայց շեմ ունեցել նման նպատակ
 Շուտ են ձանձրացնում դաշտ, անտառ գետակ
 Իսկ թռչուններին շեմ էլ նախանձի
 Հոգևոր բերկրանքն այլ կերպ է տանում
 Մի գրքից մի գիրք, մի էջից մի էջ,
 Չմոռան գիշերն է հմայք ստանում
 Եվ երանութուն բորբոքում քո մեջ,
 Իսկ եթե մի հին մագաղաթ բացես,
 Ա՛խ քունն է ամբողջ երկինքը կարծես,

Տ Ա Ո Ւ Ս Ց

Մի ձգտում ունես, լոկ մի նպատակ,
 Զանա լունենայ ո՛չ մի այլ հուզում:
 Ա՛խ, երկու հոգի՛ ունեմ կրծքիս տակ
 Որոնք իրարից զատվել են ուղում:
 Մեկը աշխարհից կառչում անդադար՝
 կյանքի ու սիրո տարփանքով անսանձ,
 Մյուսը խորշելով այս փոշուց օտար
 Տենչում է վերին ոլորտը նախնյադ:
 Ո՛վ դուք ոգիներ, թե հիրավի կաք
 Նվ երկնից-երկիր ճախրում եք անտես
 Ոսկե մշուշից շուտ եկե՛ք հանդես,
 Ինձ տարե՛ք, տվեք մի նս՛ր, ուրի՛շ կյանք:
 Թե կախարդական թիկնոց ինձ տային,
 Իս կթռչեի երկրճեր օտար
 Ո՛, չէի զիջի թիկնոցն այդ անդին
 Թե արքան նույնիսկ իր ծիրանի՛ն տար:

Վ Ա Կ Ն Ե Ր

Դու ոգիներին մի կանչիր նորից,
 Որոնք գունդ ի գունդ ճախրում են օդում:
 Մարդու դեմ անթիվ դավեր են նյութում
 Երկնային բոլոր հեռաստաններից:
 Հյուսիսից՝ զինված սուր ատամներով,
 Նետ-լեզուներով, գալիս են անվերջ,
 Արևելքից էլ, երաշտ սփռելով,

Հասնում են, սնվում թոքերով քո խեղճ
 Եվ հարավից են նրանք շտապում,
 Որ գլխիդ վառեն հրեղին մի տոթ,
 Արևմուտքից են զովությամբ խաբում
 Հետո հեղեղում և՛ դաշտ, և՛ արոտ
 Լսում են, գալիս, խաբում, վնասում
 Առաքյալներ են ձևանում երկնի,
 Հրեշտակային խոսքեր են ասում,
 Եւր թաքցրնում են կեղծիքը հայտնի
 Բայց գնանք: Աշխարհն անդեն գորշ Նազուկ
 Մշուշն է փոփում, և օդն է ցրտում:
 Երեկոյան ենք մենք զգում, հարկավ
 Թե իրականում ի՞նչ ասել է տուն:
 Ի՞նչ ես խավարին հայում զարմացած

Ձ Ա Ո Ի Ս Ց

Տեսնո՞ւմ ես մի սև շուն է վազում ցած

Վ Ա Գ Ն Ե Ր

Վաղուց եմ տեսել, բայց ուշք չեմ դարձնում

Ձ Ա Ո Ի Ս Ց

Իսկ ի՞նչ շուն է դա, քեզ եմ ես հարցնում,

Վ Ա Ք Ն Ե Ն

Ուղորական շուն: Տիրոջն իր կորցրած
Ուղում է գտնել: Այլ բան չեմ կարծում

Ձ Ա Ո Ւ Ս Տ

Եւ պտույտներ է մեր շուրջը գործում
Շրջան գծելով մոտենում կամաց:
Ինչեմ սխալվում, ետեից այդ շան
Իհս դեն են նետվում փնջերը կույծի

Վ Ա Ք Ն Ե Ն

Իւ տեսողության պատրանք է միայն
Ոչինչ չեմ տեսնում, այդ շնից բացի:

Ձ Ա Ո Ւ Ս Տ

Իւ կախարդական օղակ է արդեն,
Նրկուսիս համար անտես որոգայթ:

Վ Ա Ք Ն Ե Ն

Ի չ վախենում է մեզնից շունը այդ
Օտար մարդ տեսավ տիրոջ փոխարեն:

Ձ Ա Ո Ւ Ս Տ

Եւ զ շրջաններ է գծում մոտ է, մոտ

Հ Ա Ք Ն Ն Ե

Տեսնե՞մ ես շուն է, ոչ թե ուրվական
Մռռում է, փորին պառկում վարանոտ,
Պոչ շարժում, ինչպես շուն ափսոսկան

Ջ Ա Ո Ւ Ո Տ

Դե՛ շուտ եկ սյուտեղ, բնկերացիլ Միլ

Ղ Ա Ք Ն Ն Բ

Շատ զվարճալի կենդանի է դա
Թե անշարժ կանգնես, կսպասի նա քեզ
Կանչես՝ մոտ կգա՝ կբերի, կտա,
Երբ կորցնես մի բան, երբ ջուրը նետես
Զեռնափայտը քու Ա՛լ, փորձիր և տես

Պ Ա Ո Ւ Ս Տ

Այո, վարժեցրած շուն է սա միայն
Ոչ մի հետք չկա սատանաբուժյան

Ն Ն Ի Ն Ն Ե

Օթե շունն իրոք լինի կիրթ, կարգին
Կմաստուն մարդն էլ նրան կսիրի
Սա կարժանանա քո գորովանքին
Սյու ուշիմ սանջ ուսանողներին

(Քաղաքադրոմվ ներս են մտնում)

ԱՇԽԱՏԱՍԵՆՑԱԿ

Ն Ա Ո Ւ Ս Ց

(Շան հետ ներս մտնելով)

Դաշտից, հովտից դարձա կրկին,
Շուրջս փռվեց գիշերը խոր,
Որն իր մոթով խորհրդավոր
Ազնվացնում է մեր հոգին:
Մեղմում է նա կրքեր անսանձ,
Զսպում ամեն վայրի պոռթկում,
Վառում է սեր սրտի խորքում
Մարդու հանդեպ և առ աստված:

Անգիտ, ա՛յ շուն, ի՞նչ ես անվերջ նետվում դես դեն
Ի՞նչ ես ուղղպես դու հոտոտում շեմքը դառն,
Պատկիյ կողքին վառարանի, ուշ է արդեն,
Ի՛նչ կտամ բարձն իմ լավագույն, քնիք վրան:
Կայտառ վազքով, ուսույուններով քո շնային
Իու մեզ այնքան զվարճացրիր ճանապարհին,
Այժմ էլ խնամքն իմ ընդունիր ի տրիտուր,
Նյ դես տունս եկած խաղաղ, ցանկալի հյուր:
Ա՛խ, միշտ նրբ այս նեղլիկ խցում
Հապտերի լույսն է անկայծում
Բացվում է քո սիրտը այնպես
Ճանաչում ևս դու ինքդ քեզ,
Միտքդ կրկին հեռուն թռչում,
Թոշնոզ հույսն է ծաղկում կրկին,

Տոշորումով մի անմեկին

Կյանքի ակունքն ես անրջում:

Սի մուտա քո այդ ձայնը անասնական
Եհրդաշնակ շէ հնչյուններին այն սրբազան
Որոնք հիմա պարուրել են իմ ողջ հոգին:
Սինք սովոր ենք միայն մարդկանց այդ վարմունքին

Նրբ լիմացածն են ծանակում,
Նրբ շեն կարող տեսնել, տանել
Գեղեցիկն ու բարին կյանքում:
Դու՛ էլ նույնն ես ուզում անել:

Սակայն, ավա՛ղ արդեն զգում եմ ակամս
Որ տուշորվում է անհագուրք սիրտս հիմա,
Ինչու՛ այսպես շուտ ցամաքեց աղբյուրն աշդյոք
Նորից է ինձ տանջում ծարավն իմ անամոր:
Փորձել եմ դա վազուց ի վեր մինչև այսօր
Ըսյց այդ ցավն էլ կմեղմանա, թե սովորենք
Գնահատել գերերկրայինն ամենազոր,
Թե Հայտնությանն ապավինենք երբեք մենք
Որ ոչ մի տեղ չի ճաճանչում պայծառ այնքան
Որքան քո սուրբ էջերում, Նո՛ր Կտսկտրանու
Ներշնչանքով ահա լցված՝
Հին մատչանն եմ ուզում բացել, ազնվորեն
Թարգմանել իմ սիրած լեզվով գերմաներեն
Բնագիրը սրբազործված:

(Բացում է մի հատոր և գործի է անցնում)

Իբրևած է պարզ «Բանն էր սկիզբն ամենայնի»
 Կանգ եմ առնում: Ո՞վ ինձ պիտի առաջ տանի
 հոսքն իմ աչքին զորավոր չի թվում արդպես:
 Ա՛յ կերպ պիտի թարգմանեմ ես,
 Կի՞ն անսամ սրտիս ձայնին:
 Պիտի գրեմ «Միտքն էր սկիզբն ամենայնի»:
 Ա՛ի շտապիր, ազատութուն մի՛ տուր գրչին
 Կշռադատիր քո թարգմանած տողն առաջին:
 Ա՛ի՞ թե միտքն է արարողը ամեն բանի:
 Ա՛յ, կգրեմ. «Ուժն էր սկիզբն ամենայնի»:
 Լիցատեղ կրկին կանգ եմ առնում տարակուսած
 Եվ գրել չեմ կարողանում բառն իմ ուզած:
 Բայց սիոփված անսում եմ ես սրտիս ձայնին
 Լստահ գրում. «Գործն էր սկիզբն ամենայնի»
 Աննյակում չե՞ս ուղում մնալ,
 Ի՞նչ ես, ա՛յ շուն, ոռնում դարձյալ,
 Ե՞նչ ես հաշում
 Դու լռել չե՞ս բարեհաճում:
 Շատ հանդուրժել ես չեմ կարող
 Ընկերոջը ինձ խանդարող:
 Ուրեմն՝ այտսես
 Կամ դու, կամ ես:
 Մանր է խախտել իրավունքը հյուրընկալման
 Բայց դուրս գնա և կազատվես դու անպայման:
 Այս ի՞նչ եմ ես տեսնում, ասա՛,
 Տեսի՞լք է սա:
 Այս ինչե՞ր է իմ շունն անում

Երկարում է ու շայնանում:
 Բարձրանում է սպառնալից
 Հետք շմնաց նախկին շնից:
 Ինչպե՞ս եղավ ի սուն բերի ոգուն այս շի
 Տես, նմանվեց լես աճիու՝ աշքերը վառ
 Երախը բաց՝ սարսափելի ու սրատամ:
 Լա՛վ, սպասի՛ր, քեզ ցո՛ւյց կտամ:
 Անզոր ես դու, դե դժնադեմ,
 Սողմոնի բանալու դեմ:

Ո Գ Ի Ն Ե Ր

(Միջանցում)



Մեկի գլխին եկավ իորձանք
 Մնանք գրսում, ներս շղնանք
 Աղվեսի պես ընկավ թակարդ
 Մե՛ր խոլամանկ ոգին կախարդ
 Հգույշ լինենք
 Սլանանք վեր շրջան կսղմած
 Շուտ իջնենք ցած,
 Որոգայթից նրան հանենք
 Յույց տանք ուժը ոգիների
 Եվ շթողենք նրան գերի
 Դեզ լավություն շատ ի արևի
 Միշտ մի, մասի՛վ հող է սարեւ

Դիմեա Չորսի կախարդանքին,
 Որ շքանա այս շար ոգին:
 Սալամանդրը թող շուտ վառվի
 Թող ջրալքը վեր գալարվի
 Օդանույշը թող շքանա,
 Թող գաճաճն իր գործին գնա
 Ով ծանոթ է շորս տարերքին
 Եվ չգիտն ուժն անմեկին,
 Գաղտնիքները նրանց բոլոր,
 Նա շարյաց դեմ միշտ է անգոր:
 Սալամա՛նդր, վե՛ր բարձրացի՛ր
 Բոցկլտալով
 Զրա՛լք, հոսի՛ր ու հեռացի՛ր
 Ալիք տալով.
 Դարձի՛ր ստո՛ւպ մի դեղեցիկ
 Ով օդանույշ
 Գաճա՛ճ, եղի՛ր ինձ գորավիդ
 Եվ տո՛ւր ինձ ուժ,
 Եռտ հայտնվիր, եկ օգնութ՛յան,
 Վերջ տուր սրան, ոգի իմ տան:
 Գաղանի մեջ չկա սյահված
 Եվ ոչ մեկը շորս տարերքից:
 Քմձիժաղով նայում է ինձ:
 Չեմ հասցրել ոչ մի հարված:
 Բայց չի փրկվի. հիմա արդեն.

Ամենի լավ կկատարեմ:
Ծթե իրոք, ո՛վ շար ոքի,
Փախստական ես դժոխքի,
Ապա գու այս նշանը տես:
Սրա առաջ, ինչպես գիտես,
Ուն խաժամուժն է խոնարհվում:
Փքվո՞ւմ ես դու, փշաքաղվո՞ւմ:
Ոգի անիծյալ,
Կարո՞ղ ես կարդալ
Նրա անստեղծ
Անունը անեղծ,

Երկնից իջավ աշխարհն այս պատիր
Խաշ բարձրացավ ձեռքով դավադիր:
Վառարանի ետևից նա
Փղի նման վեր է ելնում,
Ամբողջ խուցն է արդեն լցնում
Կարծես մշուշ պիտի դառնա:
Մի՛ բարձրանա իզուր այդպես
Ոտքերիս տակ պատկիր հըու՞
Անստեղի շեմ սպառնում քեզ
Սուրբ հրով եմ քեզ այրելու
Ի՞նչ կտեսնես
Հիմա լույսը Ծրրորդոսթյան,
Ի՞նչ կտեսնես
Ուժն արվեստիս անզուգական:

Մ Ե Ն Ի Ս Ց Ա Ց Ե Լ

ուշը փարաավելուց հետո վառաւանի ետեից հայտնվ
է թափառաշրջիկ սխուլասաի զգեսառվ)

Ի՞նչ աղմուկ է: Պարոնը ի՞նչ կկամենար:

Տ Ա Ո Ի Ս Ց

Ահա թե ով էր թաքնված շան մորթու տակ.
Թափառական մի սխուլասա: Այ քեզ կատակ

Մ Ե Ց Ի Ս Ց Ա Ց Ե Լ

✕ Ձեզ ողջույն եմ բարեմաղթում, ով գիտում, այր
Ինձ քրտնեցրիք բավականին:

Տ Ա Ո Ի Ս Ց

Ով ես:

Մ Ե Ց Ի Ս Ց Ա Ց Ե Լ

Հարցը մանր է, այն էլ մեկի համար.
Ով չի տալիս ոչ մի արժեք խոսքին՝ բանին,
Ով հեռու է պատրանքներից և անքնին
Իությունն է լուկ իրերի փնտրում համառ:

Տ Ա Ո Ի Ս Ց

Ոչ, պարոնայք ձեր էությունն իրականում
Անուններից են իմանում

Ոգիներ եք ստի, ժխտման
Կեղծիքի ու գայթակղման:
Ո՞վ ես

Մ Ե Ց Ի Ս Տ Ո Ց Ե Լ

Մասնիկն եմ այն ուժի, որ հավիտյան
Տենչում շարիք, բայց բարիք է գործում միայն:

Տ Ա Ո Ի Ս Տ

Այդ առեղծվածն ինչպե՞ս պիտի հասկանալ ճիշտ:

Մ Ե Ց Ի Ս Տ Ո Ց Ե Լ

Այն տգին եմ, որ ամեն ինչ ժխտում է միշտ
Հարկավ տեղին, քանզի ինչ էլ ծնունդ առնի,
Կործանման է լոկ արժանի:
Կավ կլինեք, որ ոչ մի բան աշխարհ չգար:
Մի խոսքով, այն, ինչ ձեզ թվա մեղսոտ ու շար,
Ինչ տանում է դեպի անկում, դեպի շիրիմ,
Դա հարազատ տարերքն է իմ:

Տ Ա Ո Ի Ս Տ

Մասնիկ ես դու, բայց կանգնած ես ամբողջությամբ:

Մ Ե Ց Ի Ս Տ Խ Ց Ե Լ

Համեստ է շատ ճշմարտությունն իմ իրավամբ:
Եթե մարդը՝ փոքրիկ աշխարհն այս աշխարհում,

Իրեն ինչ որ ամբողջութուն է համարում
 Ըս մասնիկի մասնիկ եմ լոկ մի նախաստեղծ
 Ի ի մասնիկը այն խավարի, որ լույս ծնեց,
 Երկնեց այս լույսն ամբարտավան, որը հավետ
 ԿՆ է բացել բոլորիս մայր գիշերվա հետ:
 Բայց չի՛ հաղթի, ինչքան էլ որ իզուր ջանա
 Ի արմիններից անվերջ կառչած, բանտված է նս
 Ի սրմնից ծնվում, մարմին է նա գեղեցկացնում
 Ի սահմանները մարմնից այնկողմ շեն էլ անցնում
 Լուսով եմ ես, որ դա էլ չի հարատևի,
 Եվ մարմնի չեա կկործանվի լույսն երևի:

ՊԱՌԻՍՏ

Լ. չ իսկական քո կոչումն է դա հաստատում:
 Լ. չն, ինչ մեծ է, անկարող ես դու կործանել,
 Եվ մանրուքի վրա է լոկ ուժդ պատում:

ՄԵՏԻՍՏՈՅԵԼ

Հարկավ, դեռ ինձ չի հաջողվել շաա գործ անել,
 Լ. չն, ինչ իրեն Ոչնչին է միշտ հակադրում,
 Լ. չս Ինչ-որը՝ այս աշխարհը ապաշնորհ
 Ըս շեմ կարող ծունկի բերել. նա անկոտորում
 Կ ռդնամ է, կա, անգոսնելով աղետը նոր:
 Եւ ա են եղել սով, ռազմ, հրդեհ, համաճարակ,
 Բայց անխռով հավերժում են ծով ու ցամաք:
 Ի տվյալ ցեղն անասնական ու մարդկային

Անկարող եմ բնաջնրել ճանձնել մահին
 Քանիսի՞ն եմ ես կործանել, բայց ապարդշուն
 կյանքի սրտում ետում է միշտ նոր, թարմ արյուն:
 Այսպես զնա՝ կարող եմ ես խելագարվել:
 Ամենուրեք՝ օդում, ջրում, թե ցամաքում,
 Ցրտին, տոթին թե հրաշտին կյանքն անարգել
 Անթիվ ծիլեր 1 արձակում:
 Թե ինձ համար կրակ պահած շունենայի,
 Անհանգրվան անապատտան կմնայի:

Տ Ա Ո Ւ Ս Տ

Հավետ շարժուն ուժին խաղաղ
 Որն արարում է սրբորեն,
 Դու հակադրում ես նենգորեն
 Քո դիվային բռունցքը պաղ:
 Հետապնդիր այլ նպատակ,
 Քառսորդի՛ տարօրինակ:

Մ Ե Տ Ի Ս Տ Ո Տ Ե Լ

Կշռագատել նման մի քայլ
 կարող ենք մենք հաջորդ անգամ:
 Այժմ կարո՞ղ եմ հեռանալ:

Տ Ա Ո Ւ Ս Տ

Այդ ի՞նչ հարց է, իմ բարեկամ,
 Մանոթացսնք, ինչպես դիտես

նոր կամենաս, հյուրն ես իմ տան,
Բայց են և՛ դուռ, և՛ պատուհան,
Մխնեկույզն էլ հարմար է քեզ:

Մ Ե Տ Ի Ս Տ Ո Տ Ե Լ

Խոստովանեմ ուզում եմ դուրս գալ այստեղից,
Բայց մի փոքրիկ խոչընդոտ է կաշկանդում ինձ
Լհուկի ոտք է դրոշմված շեմքին ձեր տան:

Տ Ա Ո Ի Ս Տ

Այ թե ինչն է պատճառը քո շփոթության
